կորստեան Ալմանիական զօրաց։ Հազիւ ուրեմն եհաս կայսրն Ֆրէտէրիկոս առաջի Պտղոմայիդայ, ուր եւ մեռաւ իսկ։ Եւ 'ի գրգռել մարտին կատարածն տեւեաց ժամս իբրեւ 8. վնասեցան Լատինք, բայց կորուսին այլազգիք զզօրս։ Գունդ մահուան կայսեր սուգ մեծ եղեւ քրիստոնէից. այնուհետեւ չէր ինչ փոյթ նոցա զքաղաքէն, զի խորհէին դառնալ 'ի հայրենիս իւրեանց, որոյ վասն խնդրեցին հաշտութիւն. այլ իբրեւ հասին անդ այլ խումբք Խաչակրաց, 'ի դերեւ հանին զխորհուրդս նոցա, եւ վերստին սաստկացուցին զպաշարումն։ Սուլթանն տաղտկացեալ եւ տկարացեալ իսկ՝ խոյս ետ 'ի լեառն. թիւ Լատինաց առաւելոյր եւ մարտն սաստկանայր. մինչզի 'ի միում նուագի սուսերամերկք յարձակեալ ելին յաշտարակս բերդին, եւ փոքու իմն տիրեալ էին քաղաքին, եթէ ոչ էր հասեալ անդ Սուլթանին։ Եւ 'ի սոյն տագնապալից ժամու երեւեցան 'ի ծովափունս Սուրիոյ թագաւորն Անգղիոյ Ռիգարտոս, առիւծասիրտն կոչեցեալ, եւ զկնի նորա թագաւորն Գաղղիոյ Փիլիպպոս. սոքա հասեալ հզօր բանակաւ իւրեանց, խառնեցան 'ի բուն բանակն։ Սուլթանն քաջութեամբ ընդդէմ եկաց յարձակմանց նոցին ամիսս երիս, եւ պաշարումն քաղաքին տեւեաց ամս երկու. հատան ճանապարհք ծովու, սպառեցաւ պաշար քաղաքին, անկան 'ի զօրութենէ ամրականք, եւ եղեն անձնատուր։ Սակայն այլք 'ի պատմագրաց ասեն. թէ 'ի սաստկանալ մարտին եւ 'ի կործանել միոյ կողման պարսպին, եւ 'ի կոտորել այլազգեաց անխնայ 'ի բերան սրոյ, խնդրեցին հաշտութիւն պայմանաւ. տալ այլազգեաց 100,000 ոսկիս, արձակել զքրիստոնեայ գերիս, դարձուցանել զԽաչափայտն, եւ այլազգեաց ընչիւք իւրեանց մեկնիլ 'ի քաղաքէն. բայց առէին տալ առ ժամն 50,000 ոսկիս, եւ փոխանակ մնացելոյն տալ պատանդս, միայն զի արձակեսցեն զիսլամ գերիս։ Լատինք խնդրէին զամբողջ գումարն, եւ եկեալ ոմանց տեսին զգանձն, զգերիս եւ զԽաչափայտն, զոր կարծէին լինել 'ի Դամասկոս։ Լատինք թէպէտեւ զիջան 'ի պայմանն, այլ ստիպէին զնոսա կատարել անթերի, զոր խոստանայինն, եւ չէր փոյթ նոցա զի տիրեալ էին քաղաքին։ Սակայն եւ այնպէս մնաց խնդիրն անորոշ, եւ Սալահատտին